



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6
Тел.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

28.04.2025 N 08.1-04/362-25

17.04.2025 Ձեր N 02/16.5/12592-2025

Հայաստանի Հանրապետության վարչապետի
աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «թ» կետերով և 31-րդ հոդվածներով՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2025 թվականի ապրիլի 28-ի թիվ 72 Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության» վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը:

Առդիր՝ 7 թերթ:

Հարգանքով՝

Նախագահի պարտականությունները
ժամանակավոր կատարող, նախագահի տեղակալ

Հովհաննես Խաչատրյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿՈԴ

050.0072 Ա. 28.04.2025

28 ապրիլի 2025 թվականի թիվ 72 Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «թ» կետերով և 31-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության» վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
տեղակալ
Երևան**

Հովհաննես Խաչատրյան

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը
Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի
կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ¹**

Մակրոտնտեսական միջավայր²

2024 թվականի ընթացքում, շարունակվող աշխարհաքաղաքական լարվածությունների և անորոշությունների պայմաններում, համաշխարհային և Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում պահպանվել են տնտեսական աճի դանդաղման ռիսկերը: Նշվածն ուղեկցվել է գնաճի շարունակական նվազմամբ, թեև գործընկեր երկրներում կոշտ գներով բնութագրվող ապրանքների և ծառայությունների գները մնացել են հարաբերականորեն բարձր: Նման իրավիճակում կենտրոնական բանկերի կողմից պահպանվել են հարաբերականորեն խիստ դրամավարկային պայմանները:

2024 թվականի տարեսկզբին ՀՀ-ում արձանագրված տնտեսական բարձր աճը աստիճանաբար դանդաղել է՝ տարվա արդյունքում կազմելով 5.9%: Թեև այն 1 տոկոսային կետով ցածր է եղել Կառավարության թիրախային ցուցանիշից, սակայն ձևավորվել է երկարաժամկետ կայուն ներուժային մակարդակի շուրջ: Տնտեսական աճին շարունակել են էական նպաստում ունենալ շինարարության, առևտրի և ծառայությունների ճյուղերը: 2024 թվականի տնտեսական աճը շարունակել է կրել առանձին ճյուղերում աճի կենտրոնացվածության, ինչպես նաև առանձին կարճաժամկետ գործոնների ազդեցությունը: Նշվածը ձևավորել է էական անորոշություններ տնտեսական աճի կայունության, երկարաժամկետ հեռանկարի, ինչպես նաև ներքին պահանջարկի հետագա միտումների վերաբերյալ:

2024 թվականին տնտեսական աճն ուղեկցվել է վերջին տարիներին ձևավորված արտաքին բարձր պահանջարկի աստիճանական դանդաղմամբ, ինչն արտահայտվել է ոչ առևտրային դրամական փոխանցումների և զբոսաշրջային հոսքերի շարունակական նվազմամբ: Զուգահեռաբար, ներքին պահանջարկն աշխուժացել է, ինչը դրսևորվել է և՛ մասնավոր սպառման, և՛ ներդրումների, այդ թվում՝ նաև պետական ներդրումների բարձր աճով: Միևնույն ժամանակ, տարվա արդյունքում արձանագրվել է արտաքին ապրանքաշրջանառության երկնիշ աճ՝ հիմնականում պայմանավորված վերաարտահանման բարձր ծավալներով: Ընդ որում, արտահանման աճը գերազանցել է ներմուծման աճին, որի արդյունքում զուտ արտահանման դիրքը բարելավվել է և դրական նպաստում ունեցել տնտեսական աճին: Դրան զուգահեռ, ներքին պահանջարկի որոշակի աշխուժացմամբ պայմանավորված, ընթացիկ հաշվի

¹ ՀՀ կենտրոնական բանկը պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության վերաբերյալ եզրակացության կազմման շրջանակներում առաջնորդվում է բյուջեի կատարողականի՝ միջնաժամկետ պարտքի կայունության ապահովման, հարկաբյուջետային քաղաքականության պարբերաշրջանային ուղղվածության ու դիրքի, երկարաժամկետ աճին նպաստելու և այլ սկզբունքների ներքո գնահատականների ներկայացմամբ:

² Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները և գնահատականները վերցված են ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունից՝ բյուջեի ճշգրտված ծրագրի նկատմամբ:

պակասորդը շարունակել է ավելանալ՝ ՀՆԱ-ում 1.6 տոկոսային կետով մոտենալով գնահատվող կայուն մակարդակներին:

Հատկանշական է նաև, որ տնտեսական ակտիվության դանդաղման և տնտեսական աճի՝ իր ներուժային մակարդակին մոտենալու պայմաններում, հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է չեզոքին մոտ՝ փոքր ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված հիմնականում պետական սպառման և կապիտալ ներդրումների նախորդ տարվա նկատմամբ արձանագրված աճով:

Այսպիսով՝ 2024 թվականին ՀՀ տնտեսական աճը որոշակի ճշգրտվել և ձևավորվել է երկարաժամկետ կայուն մակարդակների շուրջ, սակայն դրա կառուցվածքային որոշակի առանձնահատկությունները **անորոշություններ և ռիսկեր են պարունակում համեմատաբար ներառական, կայուն և երկարաժամկետ բարձր տնտեսական աճի ապահովման տեսանկյունից:**

Գնաճ և դրամավարկային քաղաքականություն

2024 թվականին տնտեսությունում թույլ գնաճային միջավայրը պահպանվել է՝ մեծամասամբ պայմանավորված արտաքին հատվածից փոխանցվող դեռևս գնանկումային ազդեցություններով, ինչպես նաև ներքին որոշ ծառայությունների նկատմամբ արտաքին պահանջարկի թուլացմամբ: Նշենք նաև, որ ընդհանուր պահանջարկի միջավայրը և աշխատաշուկայի պայմանները ևս որոշակիորեն թուլացել և կայունացել են՝ նպաստելով աշխատավարձերի, կոշտ գներով բնութագրվող ծառայությունների գնաճի և գնաճային սպասումների նվազմանը: Այս իրավիճակում, 2024 թվականի ընթացքում 12-ամսյա գնաճը ողջ տարվա ընթացքում պահպանվել է թիրախից ցածր մակարդակում՝ 2024 թվականի դեկտեմբերին կազմելով 1.5%: Ընդ որում, 12-ամսյա բնականոն գնաճը ևս տարվա ընթացքում պահպանվել է ցածր մակարդակում և տարեվերջին կազմել է 0.9%:

Հաշվի առնելով զգալիորեն դանդաղող 12-ամսյա գնաճը, պահանջարկի և գնաճային սպասումների աստիճանական ճշգրտման միտումները, ինչպես նաև աշխատավարձերի և հարաբերականորեն կոշտ գներով բնութագրվող ոչ արտահանելի ապրանքների գնաճի համեմատաբար կայուն մակարդակում պահպանվելը, 2024 թվականին **Կենտրոնական բանկը շարունակաբար նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ ընդհանուր առմամբ 2.25 տոկոսային կետով (տարեվերջին սահմանելով 7.0%):**

Հարկաբյուջետային քաղաքականություն

2024 թվականի հարկաբյուջետային քաղաքականությունը, Կառավարության միջնաժամկետ ծրագրին համահունչ, առաջնորդվել է տնտեսական ներուժի աճին ուղղված ներդրումների մակարդակի բարձրացման և պարտքի կայունության պահպանման սկզբունքով: Սակայն, մի կողմից՝ տնտեսական աճի դանդաղման և կառուցվածքային առանձնահատկությունների, մյուս կողմից՝ անհետաձգելի կարիքների

համար առանձին ոլորտներում առաջացող հիմնախնդիրներին ուղղված հարկաբյուջետային աջակցության ծրագրերի իրականացման պայմաններում, **հարկաբյուջետային քաղաքականությունը որոշակիորեն շեղվել է նպատակադրված թիրախներից:** Արդյունքում՝ տնտեսական աճի սպասվածից ցածր մակարդակի և համախառն պահանջարկի աստիճանական թուլացման պայմաններում, **2024 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է չեզոքին մոտ՝ փոքր ընդլայնող ազդեցություն** (հարկաբյուջետային ազդակը կազմել է 0.5):

2024 թվականի տնտեսական աճի դանդաղումն անդրադարձել է հարկերի հավաքագրման վրա՝ արձանագրելով հարկերի աճի ծրագրվածից ցածր ցուցանիշներ: Այսպես՝ հարկային եկամուտները 2023 թվականի համեմատ աճել են 5.1%-ով, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 0.5 տոկոսային կետով նվազել է և կազմել 23.6%³: Հարկ է նշել նաև, որ հարկեր/ՀՆԱ-ն 1.3 տոկոսային կետով ցածր է եղել տարվա համար նախատեսված ցուցանիշից՝ զիջելով նաև միջնաժամկետ հատվածի համար նպատակադրված թիրախին: Նշվածը հիմնականում պայմանավորված է տնտեսական աճի դանդաղման պայմաններում հարկման բազաների, հարկունակ սպառման և, մասնավորապես, ներքին սպառմանն ուղղված ներմուծման կառուցվածքային փոփոխություններով: **Արդյունքում՝ եկամուտների ազդակը համախառն պահանջարկի վրա ունեցել է թույլ ընդլայնող՝ գրեթե չեզոք ազդեցություն:** Հարկ է նշել, որ հարկային եկամուտների՝ նախատեսվածից զգալի ցածր մակարդակի ապահովումը տարվա ընթացքում ռիսկեր է առաջացրել ընթացիկ տարվա պակասուրդի և պետական պարտքի ավելացման, ինչպես նաև պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության տեսանկյունից:

Այսպիսով՝ 2024թ. տնտեսական աճի կառուցվածքում կարճաժամկետ գործոնների գերակայությունը ևս մեկ անգամ փաստում է, որ հարկային եկամուտների նպատակադրված թիրախների ապահովման համար կարևորվում են տնտեսության կառուցվածքին համարժեք հարկային քաղաքականության ճշգրտումների իրականացումը և բյուջեի վերաբաշխման արդյունավետության ապահովումը:

Առաջնորդվելով տնտեսության ներուժի ավելացման և տնտեսական աճի նպատակադրված թիրախի ապահովման սկզբունքով՝ պետական բյուջեի ծախսային քաղաքականությունը 2024 թվականին շարունակել է շեշտադրել կապիտալ ծախսերի ծավալների աճի ապահովումը, ինչպես նաև անհետաձգելի սոցիալական կարիքներին ուղղված հարկաբյուջետային աջակցության ծրագրերի իրականացումը⁴: Արդյունքում՝

³ Նշենք, որ 2020-2023թթ. եկամուտների և ծախսերի ցուցանիշներում ներառվել է հիպոտեկային վարկերի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը, իսկ 2024 թվականին այն ներառվել է ծախսերում: Հարկային եկամուտների հաշվառման մեթոդաբանական փոփոխություններով պայմանավորված, մասնավորապես՝ հիպոտեկային վարկերի վճարված տոկոսների գումարի վերադարձը հաշվի առած, հարկային եկամուտների ու պետական տուրքերի աճը կկազմի 4.5%: Նշենք, որ 2024 թվականին այն կազմել է շուրջ 68.6 մլրդ դրամ:

⁴ Մասնավորապես, անհետաձգելի սոցիալական խնդիրների շարքում են եղել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց և ջրիեղելից տուժած տարածքների սոցիալական աջակցությանն ուղղվող ծախսերը:

2024 թվականի պետական բյուջեի ծախսերն աճել են և՛ ընթացիկ, և՛ կապիտալ ծրագրերի գծով՝ միևնույն ժամանակ ուղեկցվելով ծախսերի՝ ծրագրվածի նկատմամբ թերի կատարման արդյունքներով: Այսպես՝ 2024 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 16.0%-ով՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի 16.3% և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի՝ 12.8% աճերով⁵: Սա ուղեկցվել է ՀՆԱ-ում պետական ծախսերի տեսակարար կշռի՝ նախատեսված 3.0 տոկոսային կետի համեմատ ավելի փոքր՝ 1.7 տոկոսային կետ աճով, որը հիմնականում պայմանավորվել է կապիտալ ներդրումների՝ ծրագրվածից շուրջ 1.3 տոկոսային կետով ավելի ցածր փաստացի ցուցանիշով: Արդյունքում՝ 2024 թվականի պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում աճել է և կազմել 29.2%, որտեղ ընթացիկ ծախսերի կշիռը/ՀՆԱ-ում նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.3 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 0.3 տոկոսային կետով: Հատկանշական է, որ չնայած կապիտալ ներդրումների աճին, այն զիջել է ինչպես տարվա համար նախատեսված, այնպես էլ Կառավարության ծրագրով նպատակադրված թիրախին և կազմել ՀՆԱ-ի 5.5%-ը:

Պետական ծախսերի վերը նշված զարգացումների արդյունքում բյուջեի ծախսերը համախառն պահանջարկի վրա ունեցել են չեզոքին մոտ՝ փոքր ընդլայնող ազդեցություն:

Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի կատարողականը, որը վերջին տարիներին ուղեկցվում է ծրագրված ծավալների շարունակական ավելացմամբ, 2024 թվականին որոշակի վատթարացել է: Այսպես՝ կապիտալ ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 84.7%՝ նախորդ տարվա 95.8%-ի համեմատ, իսկ պետական բյուջեի սկզբնական ծրագրի նկատմամբ կազմել է 78.5%: Այս պարագայում, **հարկ է շեշտադրել, որ կապիտալ ծրագրերի կառավարման և իրականացման արդյունավետության բարձրացման խնդիրը շարունակում է մնալ արդիական:** Ավելին՝ կապիտալ ծախսերի ցանկացած թերակատարում ռիսկ է ստեղծում միջնաժամկետում տնտեսության ներուժային աճի նպատակադրված ցուցանիշների ապահովման համար:

Պետական բյուջեի և՛ եկամուտների, և՛ ծախսերի՝ համեմատաբար ցածր կատարողականների արդյունքում, 2024 թվականին բյուջեի պակասուրդը, թեև զիջել է 2024 թվականի բյուջեում նախանշված ցուցանիշին, սակայն կրկնակի գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Այսպես՝ 2024 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա նկատմամբ աճել է 187.2 մլրդ դրամով և կազմել 376 մլրդ դրամ՝ 17.6%-ով զիջելով ծրագրով նախատեսված ցուցանիշին: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը ևս ծրագրվածից ցածր մակարդակ է արձանագրել՝ կազմելով 3.7%՝ ծրագրված 4.6%-ի և 2023 թվականի 2.0%-ի դիմաց: Միևնույն ժամանակ, բյուջեի կատարումն ուղեկցվել է

⁵ Նախորդ տարվա հետ համադրելի ցուցանիշի (առանց հիպոտեկային վարկերի վճարված տոկոսների վերադարձված գումարների) ծախսերի աճը կազմում է 13.3%: Նախորդ տարվա համեմատ աճել է նաև պետական բյուջեի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ՝ 27%-ից մինչև 28.5% (առանց հիպոտեկային վարկերի վճարված տոկոսների վերադարձված գումարների):

հարկաբյուջետային կանոնների պահպանմամբ, և տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի պակասուրդը մշտապես ցածր է եղել կապիտալ ծախսերից: 2024 թվականին, ինչպես և նախորդ տարի, պակասուրդի մեծ մասը՝ 95.5%-ը, ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին, միաժամանակ արձանագրելով արտաքին աղբյուրներից ֆինանսավորման՝ ծրագրվածի համեմատ ավելի ցածր շեղման մակարդակ: Հատկանշական է, որ 2024 թվականի ընթացքում որոշակիորեն նվազել են բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ծախսերը՝ պայմանավորված դրամավարկային քաղաքականության աստիճանաբար մեղմման արդյունքում պետական պարտատոմսերի տոկոսների նվազմամբ:

Արդյունքում՝ թեև 2024 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում կրել է չեզոք բնույթ, **տնտեսական աճի կառուցվածքային առանձնահատկություններից բխող հարկաբյուջետային խնդիրները, ինչպես նաև կապիտալ ծախսերի ծրագրերի իրականացման ուղղությամբ դեռևս պահպանվող թերակատարումները որոշակի անորոշություններ և ռիսկեր են պարունակել տնտեսությունում հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտ դիրքի ապահովման տեսանկյունից:**

ՀՀ կառավարության պարտքի բեռը 2024 թվականին պահպանվել է ՀՀ հարկաբյուջետային կանոններով թիրախավորվող 50%-ից ցածր մակարդակում՝ արտացոլելով հարկաբյուջետային և պարտքի կայունությունը, ինչպես նաև պահպանվող դրական մակրոտնտեսական միջավայրը: Այսպես՝ 2024 թվականին **Կառավարության պարտքի՝ ՀՆԱ-ում անվանական արժեքի համեմատ ցածր աճի պայմաններում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 48.3%:** Նշենք նաև, որ Կառավարության պարտքի բեռը ցածր է եղել նաև 2022-2026թթ. պարտքի բեռի նվազեցման ծրագրով նախատեսված ցուցանիշից:

Արդյունքում կարելի է արձանագրել, որ 2024 թվականին տնտեսության ներուժի ավելացմանն ուղղված պետական ներդրումային ծրագրերի իրականացմանը զուգահեռ պետական պարտքի կայունության ապահովումը, ինչպես նաև բյուջեի պակասուրդի ֆինանսավորման համատեքստում պարտքի կառավարման համարժեք ու արդյունավետ ռազմավարության կիրառումը կարևոր նախապայման են **հարկաբյուջետային քաղաքականության ճկունության, տնտեսության միջնաժամկետ աճին ուղղված ծրագրերի շարունակականության, ինչպես նաև պարտքի սպասարկման հեռանկարների բարելավման համար անհրաժեշտ երաշխիքների ձևավորման տեսանկյունից:** Ամփոփելով փաստենք, որ չնայած շարունակվող մարտահրավերներին և անորոշություններին, ինչպես նաև տնտեսական աճի դադաղմանն ու կառուցվածքային առանձնահատկություններին, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ համադրման շնորհիվ 2024 թվականին **ինարավոր է եղել ապահովել մակրոտնտեսական կայունությունը ՀՀ-ում:** Այնուամենայնիվ, ձևավորված մակրոտնտեսական անորոշությունների պայմաններում 2024 թվականին իրականացրած հարկաբյուջետային

քաղաքականության արդյունքները շեղվել են միջնաժամկետ և երկարաժամկետ նախանշված թիրախներից: Այս համատեքստում, **Կենտրոնական բանկը կարևորում է տնտեսական աճի կառուցվածքային առանձնահատկություններից բխող անհրաժեշտ ոլորտային վերաբաշխմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև պետական կապիտալ ծախսերի՝ նախատեսված ծավալների ապահովման անհրաժեշտությունը:** Միևնույն ժամանակ, միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային կայունության և տնտեսական խթանների արդյունավետ համադրման շրջանակներում **Կենտրոնական բանկը ընդգծում է Կառավարության նպատակադրած թիրախներն ապահովող արդյունավետ միջոցառումների հետևողական իրականացման կարևորությունը:**